

ՀԱՍՄԻԿ ԻՐԻՑՅԱՆ

ԳԱՐԲԻԵԼ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i73.247

ԱՄՓՈՓՈՒՄ

Գ. Այվազյանի «Ուղղագրություն լեզուիս հայոց» դասագիրք-աշխատությունը, բացի մանկավարժական բուն գործառույթից, արտահայտում է հեղինակի քերականագիտական ըմբռնումներն ու մոտեցումները լեզվական այս կամ այն հարցի վերաբերյալ:

Աշխատության մեջ քննվում են գրերի գյուտին, տառերի արտասանական խնդիրներին, ինչպես նաև տառադարձությանը և կետադրությանը վերաբերող բազմաթիվ կարևոր հարցեր: Գրերի գյուտի մասին շրջանառվող կարծիքների, հայերեն տառերի ստեղծման պատմության և այլ լեզուների տառերի հետ հարակցության մասին Գ. Այվազյանը տալիս է համակողմանի գիտելիքներ: Ժամանակի թելադրանքով հեղինակը մեծ տեղ և դեր է հատկացնում տառադարձությանն առնչվող խնդիրներին՝ նշելով այն բոլոր սկզբունքները, որոնց պետք է հետևել թարգմանիչներն իրենց գործերը հնարավորինս միօրինականացնելու նպատակով:

Գ. Այվազյանի քերականագիտական մոտեցումները հիմնված են հայոց լեզվի զարգացման պատմության հարուստ փորձի վրա: Հեղինակը կարողացել է ճիշտ կանխորոշել աշխարհաբարում կիրառվող ուղղագրական և կետադրական բազում գործառույթներ, որոնց մեծ մասն արդիական է նաև ժամանակակից հայերենում: Ավելին, եվրոպական լեզուների հետ զուգաձևությունները և համեմատությունները հեղինակի աշխատությունը դարձրել են ավելի համակողմանի և իր ժամանակի համար չափազանց արդյունավետ քերականական գործ:

Բանալի բառեր և արտահայտություններ. Գաբրիել Այվազյան, Գաբրիել Այվազովսկի, քերականագիտական ըմբռնումներ, հայոց այբուբեն, հնչյունաբանություն, ուղղագրություն, տառադարձություն, հնչերանգ, կետադրական նշաններ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գաբրիել Այվազյանը (1812-1880թթ., աշխարհահռչակ հայ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայրը) եղել է նշանավոր եկեղեցական և հասարակական գործիչ, պատմաբան, բանասեր, լեզվաբան և թարգմանիչ: Նա իր կյանքի մեծ մասն անցկացրել է Վենետիկի Մխիթարյան միաբանությունում և եղել իր ժամանակի ակտիվ Մխիթարյաններից մեկը: Պատմագիտության բնագավառում և աստվածաբանական (եկեղեցական) գրականության մեջ հայտնի Գաբրիել արքեպս. Այվազյանը, սակայն, անհայտ է հայագիտության բնագավառում՝ որպես բանասեր, լեզվաբան և թարգմանիչ: Պատմական, կրոնաբարոյական և թարգմանական բնույթի բազմաթիվ աշխատություններին զուգահեռ Գ. Այվազյանը գրել է նաև բանասիրական, մասնավորապես՝ լեզվագիտական ուղղվածությամբ զգալի թվով աշխատություններ, որոնցից մեկի քննությունը ներկա հոդվածի խնդրո առարկան է:

Գ. Այվազյանի՝ որպես Մխիթարյան միաբանության ակտիվ անդամներից մեկի, հասարակական գործունեությանն ու գիտական ժառանգությանն անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածներում (**Իրիցյան Հ. 2018; Իրիցյան Հ., 2019, Իրիցյան Հ., 2020**): Հեղինակի՝ աշխարհաբարին նախապատվություն տալու փաստարկը ևս առիթ ենք ունեցել բազմիցս նշելու՝ վկայակոչելով տարբեր ժամանակներում գրված նրա աշխատությունները և հոդվածները հայերենի և վերջինիս հետագա զարգացման վերաբերյալ: Իր կյանքի գրեթե բոլոր տարիների մանկավարժական գործունեության շնորհիվ՝ նա քաջ գիտակցում էր աշխարհաբարի կարևորությունը հայ մանուկներին նյութը հասցնելու առումով: Դա էր նաև այն հիմնական պատճառը, որ տարբեր ժամանակներում նա հրատարակել է նաև մանկավարժական բնույթի դասագրքեր և աշխատություններ,

որոնցում, անկասկած, երևում են հեղինակի՝ հայերենի և վերջինիս պատմական զարգացմանն առնչվող խոր գիտելիքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննությունը կատարվել է պատմահամեմատական, համադրական-վերլուծական և զուգադրական մեթոդներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. **«Ուղղագրություն լեզուիս հայոց» դասագիրք-աշխատությունը. կառուցվածքը, խնդիրները:** Այդպիսի նպատակային գործերից է նաև **«Ուղղագրություն լեզուիս հայոց»** դասագիրք-աշխատությունը, որտեղ բացի մանկավարժական բուն գործառնությունից՝ երևում են նաև հեղինակի քերականագիտական ըմբռնումներն ու մոտեցումները լեզվական այս կամ այն հարցի վերաբերյալ: Դասագիրքը գրված է **հարց ու պատասխանի** կադապարով, լեզուն դյուրընկալելի է, շարադրանքը պարզ և հստակ՝ գրեթե մշակված աշխարհաբար՝ զերծ խիստ բարբառային տարրերից ու արհեստական գրաբարյան կառույցներից:

«Ուղղագրություն լեզուիս հայոց» դասագիրք-աշխատությունը բաղկացած է ներածական հատվածից (**Նախագիտելիք**. կրկին հարց-պատասխան կադապարով) և երեք մասերից՝ իրենց համապատասխան ենթակետերով. 1. **Տառագիտություն**, 2. **Առոգանություն**, 3. **Տրոհություն**: Չնայած նյութի՝ առաջին հայացքից թվացող պարզությանը՝ Գ. Այվազյանը մանկավարժական մեծ փորձի և հայերենի համակողմանի գիտելիքների շնորհիվ կարողացել է ցանկացած հարցի պատասխանը մեկտեղել նաև անհրաժեշտ վերլուծություններով՝ սկսած լեզվի պատմական զարգացումով և ավարտած տվյալ ժամանակաշրջանում ավելի գերիշխող լեզվական երևույթով: Եվ որ ամենակարևորն է, յուրաքանչյուր հարցի պատասխանի մեջ կա հեղինակի դիրքորոշումը, վերջինիս տրամաբանված նախապատվությունը այս կամ այն լեզվական երևույթի վերաբերյալ:

Այսպես, օրինակ, հարցադրումներից մեկի դեպքում, թե արդյոք ավելի նպատակահարմար չէ՞ թեկուզ միա՛յն աշխարհաբարի համար տառերի գրությունը

նույնացնել վերջիններիս հնչողությանը, Գ. Այվազյանը որպես պատասխան նշում է, որ, իհարկե՝ ավելի տրամաբանական կլիներ, սակայն գրաքարում և ժամանակի շրջանառվող բարբառներում *միննույն բառն ունի բազմաթիվ տարբերակներ* (ընդգծ.՝ Հ. Ի.), ու այդ լուծումը «մեծ վնաս կպատճառի նաև գրաբառին ուղղագրութեանը, եւ մեծ խառնակութիւն» (Այվազեան Գ., 1869): Առաջին մասում՝ *Տառազիտութիւն*, տրվում է վերջինիս սահմանումը և ենթակետերը, որ հեղինակը բաժանում է 4 կետի. 1. *Գիւտ տառից*, 2. *Արտասանութիւն եւ հնչումն տառից*, 3. *Լծորդութիւն տառից* («որ է տառերուն երբեմն իրարու տեղ դրուիլը»), 4. *Տառադարձութիւն* («որ է մեր տառերուն օտար ազգաց տառերուն հետ ունեցած համեմատութիւնը»): Գրերի գյուտի վերաբերյալ շրջանառվող կարծիքների, հայերեն տառերի ստեղծման պատմության, նաև՝ այլ լեզուների հետ հայերեն տառերի հարակցության առիթով Գ. Այվազյանը տալիս է համակողմանի գիտելիքներ (իհարկե, հաճախ նաև վիճելի): Նշելով, որ հայերեն տառերը ստեղծել է Մ. Մաշտոցը 406թ.՝ հեղինակը չի բացառում նաև նախամաշտոցյան գրերի գոյությունը: Ըստ նրա՝ մինչ գրերի գյուտը հայերը պարսիկների և ասորեստանցիների նման կիրառել են «*բեւեռաձեւ կամ սեպաձեւ տառեր*», որոնցով գրված արձանագրություններ են հասել մեզ Նինվեի, Բաբելոնի, նաև Վանի բերդի և Սևանա լճի հարակից տարածքներում: Գ. Այվազյանը նշում է, որ գործածվել են նաև հույների և ասորիների տառերը, զանազան «*նշաններ կամ նշանագրեր*», որոնք հիմնականում գործածական բառերի գաղափարագրություններ են, ինչպիսին են՝ *աստղ, երկինք, աշխարհ, լուսին* և այլն (սրանք, ըստ հեղինակի, ավելի «*համառոտագրութիւն եւ արագագրութիւն*» են, քան կանոնավոր գրեր): Գ. Այվազյանն անդրադառնում է նաև Դանիելյան նշանագրերին, որոնք, ինչպես փաստում է հեղինակը, 24, 22 և 29 հատ էին՝ ըստ տարբեր կարծիքների, սակայն վերջիններիս մասին ստույգ տեղեկություններ հնարավոր չէ տալ վկայություններ չունենալու պատճառով: Գ. Այվազյանը շեշտում է, որ հիմնական գերխնդիրը, որ ստիպեց Մ. Մաշտոցին ստեղծել հայերենի այբուբենը, օտար այբուբենների և Դանիելյան նշանագրերի անկատարությունն էր,

որովհետև դժվար էր հայերեն բառերն ու հնչյուններն արտահայտել այլ լեզուների տառերով:

2. Հայոց այբուբենը, հայերեն տառերի հարակցությունն այլ լեզուների այբուբենների տառերի հետ՝ ըստ Գ. Այվազյանի: Չնայած այն տարածված կարծիքին, որ ձայնավորների ստեղծումը ավելի բարդ է եղել Մ. Մաշտոցի համար, քան բաղաձայններին՝ Գ. Այվազյանը փաստում է հակառակը՝ վկայակոչելով հայերենի բաղաձայնական եռաստիճան համակարգը՝ *բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ* և այլն, իսկ ձայնավորների ստեղծումը հունարեն իմացողի համար, ինչպիսին Մ. Մաշտոցն էր, պետք է, որ դժվարություն չհարուցեր: Ինչ վերաբերում է հայերեն տառերի քանակին և տեսքին՝ հեղինակը նշում է, որ հնարավոր չէ ստույգ իմանալ, թե որո՞նք ենք միայն Մ. Մաշտոցի ստեղծածները, և որո՞նք Դանիելյան նշանագրերը (արդի հայերենագիտության մեջ տարածված կարծիքն այն է, որ Մ. Մաշտոցը, տեսնելով Դանիելյան նշանագրերի թերի լինելը, ստեղծում է այբուբենը առանց վերջինս հիմք ունենալու, սակայն կան նաև այլ կարծիքներ (Աճառյան Հ., 1984; Աբրահամյան Ա., 1973; Աղայան Է., 1977; Հակոբյան (Թարումեան) Ռ., 2017; Մուշեղյան Ա., 2006), մինչդեռ, ըստ նրա, կարելի է հստակ ասել, օրինակ, որ տառերն են ստեղծվել հունարեն տառերի նմանողությամբ: Գ. Այվազյանն առաջարկում է համեմատել հայերեն երկաթագիրը հունարենի երկաթագրի հետ և բերում է հետևյալ շարքը.

A	B	Γ	Δ	E	Z	H	Θ	I	K	Λ	M	N	Ξ	O	Π	P	Σ	T	Υ	Φ	X	Ψ	Ω
Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Թ	Ի	Կ	Լ	Մ	Ն	Շ	Ո	Պ	Ռ	Ս	Տ	Ի	Փ	Ք	փս պս	ով աւ

Գ. Այվազյանի կարծիքով Մ. Մաշտոցը մեր այբուբենն ստեղծելիս ձեռքի տակ ունեցել է հունարենի այբուբենը՝ թե՛ ձևի և թե՛ կարգի առումներով, իսկ մնացած տառերը ստեղծելուց հետո տեղադրել մեջ ընդ մեջ: Ինչ վերաբերում է առանձին ստեղծած տառերի նմանությանը, հեղինակը նշում է, որ *L* տառը կարելի է նմանեցնել լատիներենի *L*-ին, *Ճ* տառը՝ եգիպտացիների (*Եգիպտացոց կամ Ղփտոց* – Գ. Ա.) *Ճ* «Ճանճա» տառին, իսկ ոմանց կարծիքով էլ *Վ* տառը՝

լատիներենի *V*-ին: Հայերեն այբուբենի մի քանի տառաձև, ըստ նրա, կարող ենք տեսնել սլավոնական կամ ռուսական կիրիլյա (*կիրիլեղեան* – Գ. Ա., 9-րդ դար) այբուբենի մեջ՝ *Ѣ (Б), Ё (Г), З* (նկատի ունի փոքրատառ ց-ի տպատառը. *Ц*), վերը նշված *Ѧ* տառը իր ժամանակակից եգիպտացիների այբուբենում, իսկ վրացերենի հին այբուբենը (*խուցուրի* – Գ. Ա.), որ Մ. Մաշտոցի ստեղծածն է, շատ տառեր ունի մեր գրին նման: Նա անդրադառնում է նաև ժամանակի ընթացքում տառերի մասնակի ձևափոխություններին՝ նշելով բոլոր տեսակներն իրենց բնութագրող առանձնահատկություններով՝ *երկաթագիր, բոլորգիր, նոտրգիր, շղագիր*: Ինչ վերաբերում է հետագայում մուծված *օ* և *ֆ* տառերին՝ Գ. Այվազյանը նշում է, որ Մ. Մաշտոցը *օ* հնչյունը արտահայտել է *աւ* տառերով, դա է պատճառը, որ մինչև 9-րդ և 10-րդ դարերի ձեռագրերում հանդիպում ենք *հաւր, մաւր, աւրհնութիւն, Պաւղոս*, որոնք, անկասկած, կարդացվել են *հօր, մօր, օրհնութիւն, Պօղոս*: 10-րդ դարից սկսած որոշ գրիչներ *աւ* երկբարբառի վրա դրել են հունարենի *ω* «օմէկա, մեծ օ» տառը, որպեսզի այն *աւ* չկարդացվի, և աստիճանաբար ավելի նպատակահարմար են գտել *աւ*-ի փոխարեն գրել *օ*: *Ֆ* տառի մուծումը մեր այբուբեն՝ հեղինակը կապում լատիներենի *F (f)* տառաձևի հետ: Պատճառն այլ լեզուների բառերի արտասանության պահպանումն էր, քանի որ հայերենում *ֆ* հնչյունը տառադարձվում էր *փ*-ով: Գ. Այվազյանը նշում է, որ *ֆ* տառով բնիկ բառեր չունի նաև ռուսերենը, *նօղայ* կոչվող թաթարական լեզվում նույնպես չկա *Ֆ*. վերջինիս փոխարեն գործածվում է *փ*:

3. Հայերեն տառերի՝ Գ. Այվազյանի արտասանական խմբավորումը՝ ըստ տարածքային առանձնահատկությունների. հայոց այբուբենի հնչյունական յուրահատկությունները: Հետաքրքիր է Գ. Այվազյանի՝ հայերեն տառերի արտասանության խմբավորումը՝ ըստ տարածքային առանձնահատկությունների: Նա առանձնացնում է տառերի հնչողության 3 խումբ. 1. *Միջերկրեայ Հայոց* (երևանցիներ, աշտարակցիներ, վաղարշապատցիներ, շիրակցիներ, մշեցիներ, վանեցիներ, կարնեցիներ), 2. *Հիւսիսային Հայոց* (սյունեցիներ կամ դարաբաղցիներ, արցախցիներ կամ գանձակեցիներ, շամախեցիներ, վրաստանցիներ), 3. *Արեւմտեան Հայոց* (պոլսեցիներ, մոլդովացիներ,

լեհաստանցիներ, դրիմեցիներ, նորնախիջևանցիներ): Մասնավորապես բաղաձայնների արտասանական առանձնահատկություններից ելնելով՝ հեղինակը նշված խմբերից նախապատվությունը տալիս է առաջինների (*Միջերկրեայ Հայոց*) հնչողությանը՝ իբրև «*բուն ազգային* արտասանություն» (Այվազեան Գ., 1869): Այնուհետև հեղինակը շատ մանրամասն և հանգամանալից ներկայացնում է այդ երեք խմբերում բաղաձայնական եռաստիճան համակարգի բաշխվածությունը և արտասանական յուրահատկությունները (*բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ* և այլն)՝ շատ հաճախ դրանց արտաբերությունը գուգադրելով ռուսերենի և եվրոպական որոշ լեզուների հնչյունների (տառերի) հետ (օրինակ՝ Ջ տառը՝ dz, dz, իսկ Ջ տառը՝ dj, dj):

Ինչ վերաբերում է տառերի՝ ըստ ձայնի և աղմուկի պարունակության և վերջիններիս հարաբերության հաշվառմամբ (Սուքիասյան Ա., 2004) դասակարգմանը՝ *ձայնավոր* և *բաղաձայն*, Գ. Այվազյանը տառերից յուրաքանչյուրին անդրադառնում է առանձին-առանձին՝ ձայնավորների դեպքում նաև հնչարտաբերական առանձնահատկություններից բացի՝ նշելով նաև տվյալ տառի հնչյունափոխության հետ կապված որոշ կետեր (*գերանդի>գերընդի, ասել>ըսել*) և ներկայացնում նրանցով կազմված երկբարբառների մանրամասն քննություն:

Բաղաձայնները հեղինակը բաժանում է 3 հիմնական խմբի՝ *նուրբ* («կասուին նաեւ *բարակ* կամ *լերկ*», արդի եզրաբանությամբ՝ *պարզ խուլ*)՝ *պ, կ, տ, ծ, ճ, միջակ* (արդի եզրաբանությամբ՝ *ձայնեղ*)՝ *բ, գ, դ, ձ, ջ, և թաւ* («կկոչուին նաեւ *խաժ* կամ *յոյր*», արդի եզրաբանությամբ՝ *շնչեղ խուլ*)՝ *փ, ք, թ, ց, չ*: Ըստ վերը նշված տարածքային բաժանումների՝ Գ. Այվազյանը մանրամասն ներկայացնում է նաև բաղաձայնների եռաստիճան համակարգի տեղաշարժ-տեղափոխությունները՝ այս կամ այն բարբառում միևնույն տառի տարբեր հնչողությունները: Նա նշում է, որ բաղաձայնների ճիշտ հնչողությունը պահպանված է *Միջերկրյա Հայոց*-ի բնակիչների մոտ, իսկ *Հիւսիսային Հայոց*-ի և *Արեւմտեան Հայոց*-ի բնակիչներն ունեն բաղաձայնների՝ միմյանց հակառակ հնչողություն (այսպես՝ եթե առաջինի դեպքում *վարդապետ* բառը կարտասանվեր որպես ֆր.՝ *vardapièt*, ռուս.՝ *вардапѣтъ*

գրությունների նման, ապա երկրորդի դեպքում կլինեն՝ ֆր.՝ *vartabet*, ռուս.՝ *вартабет* ձևերի արտասանությունը) (Այվազեան Գ., 1869): Բաղաձայնների մնացած մասը, ըստ հեղինակի, բաժանվում է կրկին 3 խմբի՝ **նայ** («այսինքն կակուղ եւ փափուկ»)՝ **դ, լ, մ, ն, ր, կիսաձայն՝ զ, ժ, ծ, ձ, ճ, շ, չ, ջ, ս, ց, և կոկորդային՝ խ, դ, հ:** Գ. Այվազյանն անդրադառնում է նաև **դ>լ** տառերի անցումներին՝ նշելով, որ օր.՝ **Փրդ'աղեղ'փռու, Պղ'ատոն** բառերի մեջ «**փշիկով**» **դ**-ն պետք է կարդալ կես **դատ** (ավելի քմային), ոչ թե կես **լիւն**, ինչպես կարծում են ոմանք (Բագրատունի Ա., 1852), քանի որ, ըստ նրա, օտար լեզուներից փոխառված բառերում **Լ**-ի փոխարեն գրվում է **դ**՝ **Ղուկաս, Պտղոմեոս, Սողոմոն, Վաղարշ, սաղմոս, եկեղեցի** և այլն: Հեղինակը փաստում է, որ մեր **դ** կամ **դ'** տառը դրվել է հունարեն **λ** տառի փոխարեն. ճիշտ է, մեր այբուբենում կար **լ** տառը, և ավելի տրամաբանական կլիներ նրանով փոխարինել, սակայն Գ. Այվազյանի կարծիքով, հավանաբար հունարենի «**լամտան**» և հայերենի «**լիւնք**» տարբեր հնչողություն են ունեցել, ուստի հունարենի **λ**-ի դիմաց հայերենում ունենք **դ**:

Ստորև բերենք Գ. Այվազյանի նշած օրինակներից մի քանիսը.

ὄλαλαγμός [ալալակմո'ս]	աղաղակ	μέλι [մէ'լի]	մեղր
βαλνεῖον [վալնի'ոն]	բաղանիք	βήρυλλος [վի'ռիլլոս]	բիրլեղ
ἐλαιον [է'լեոն]	եղ, իւղ	μελωδία [մէլօսի'ա]	մեղեղի

Հեղինակն առանձին գլուխ է հատկացնում նաև տառերի լծորդությանն առնչվող խնդիրների վերհանմանը («Լծորդ կասուին այն տառերն, որ իրենց հնչման նմանութեանը պատճառաւ երբեմն իրարու տեղ կդրուին». Այվազեան Գ., 1869): Այսպես օրինակ՝ **ա** ձայնավորը լծորդ է **է**-ի, **ը**-ի, **ռ**-ի հետ՝ **զրաւ>զրեւ, անկողին>ընկողին, է**-ն՝ **է**-ի, **ը**-ի, **ի**-ի հետ՝ **գմբէթ>գմբէթ, հրեշտակ>հրըշտակ, Բաբելոն>Բաբիլոն** և այլն: Բաղաձայնների դեպքում, ըստ նրա, լծորդություն են դրսևորում **միջակ** (ձայնեղ) բաղաձայնները **նուրբ** (պարզ խուլ) բաղաձայնների հետ՝ **ամպ>ամբ, ըմպել>ընպել, գունդ>գունտ**, այլ բաղաձայնների դեպքում նույպես նկատվում է այս երևույթը՝ **զգեստ>զգեստ, նժդեհ>նշդեհ, բախտ>բաղդ, Աղեքսանդր>Աղեկսանդր** այլն:

Այն հարցին, թե բառապաշարի այս բազմաձևության մեջ ո՞ր տարբերակներն են նպատակահարմար կիրառել, հեղինակը նշում է, որ «պետք է ազգային ուղիղ հնչման միայն հետեւիլ, որ *Միջերկրեայ* (ընդգծ.՝ - Գ. Ա.) հայերունն է անտարակոյս»:

4. Տառադարձությանն առնչվող խնդիրները և լուծումները Գ. Այվազյանի ընկալմամբ: Գ. Այվազյանը չափազանց կարևորելով տառադարձության հետ կապված խնդիրները՝ մի ընդարձակ գլուխ հատկացնում է վերջինիս պարզաբանմանը: Ինչպես նշեցինք վերևում, տարբեր ազգերի միջև եղած մշակութային առնչակցությունները և բուռն զարգացում ապրող ժամանակի թարգմանական գրականությունը պարտադրում էին գոնե հատուկ անունների դեպքում մշակել և միօրինականացնել տառադարձության հիմնական կանոնները: Վերջինիս տարբերակվածության գլխավոր պատճառ Գ. Այվազյանը համարում է յուրաքանչյուր լեզվի՝ այսպես կոչված «*սեպհական յատկությունները*»: Ըստ նրա՝ յուրաքանչյուր լեզվում նույն հնչյունն ունի տարբեր արտասանական դրսևորումներ, ուստի հեշտությամբ կարելի է կռահել **գերմաներեն խոսող ֆրանսիացուն կամ ֆրանսերեն խոսող գերմանացուն:**

Ուստի թարգմանության ժամանակ մեր նախնիները, ըստ հեղինակի, հնարավորինս հարմարեցրել են տառի հնչյունական առանձնահատկությունները, օր.՝ հունարենի *γ* եւ *χ* տառերի դիմաց դնելով հայերենի՝ համապատասխանաբար *գ* եւ *ք* տառերը, մինչդեռ նշվածներից ոչ առաջինը և ոչ էլ երկրորդը չունեն հայերենի հնչյունային նույնականությունը: Գ. Այվազյանն անդրադառնում է նաև հունարենի որոշ տառերի՝ հայերենում ունեցած տարբերակներին: Այսպես, օր.՝ ինչո՞ւ հունարեն *β* (վի՛թա) տառին համարժեք հայերենում դրվել է *բ* տառը, այն դեպքում, երբ ժամանակակից հունարենում այն հնչում է որպես *վ*: Հեղինակը վկայակոչում է եվրոպացիների և հույների վեճն առ այն, որ, ըստ եվրոպացիների, հունարենի *β*-ին համարժեք պետք է դրվի լատիներենի *b* տառը և ոչ *v* տառը, մինչդեռ, ըստ հույների, այն հնչում է որպես *վ* և պետք է դրվի լատիներենի *v* տառը: Գ. Այվազյանը նախապատվությունը տալիս է հույներին, նշելով, որ վերջիններս պիտի որ ավելի պահպանած լինեին իրենց ազգային հնչողությունը, միաժամանակ

նշում, սակայն, որ մեր նախնիներն էլ հունարեն *β*-ին համարժեք դրել են *բ* տառը, և ոչ *վ*-ն, օր.՝ *Βασιλος* (Վասիլիոս) անունը տառադարձել են *Բասիլիոս*, երբեմն ավելի հայացնելով՝ *Բարսեղ*, և միայն 8-9-րդ դարերից հետո տառադարձել նաև *Վասիլ* տարբերակով (իրավամբ, *Բարսեղ* անձնանունը հին, իսկ *Վասիլ*-ը նոր շրջանի փոխառություններ են): Կամ, օրինակ, հունարեն *η* տառին համարժեք է *է*-ն, ոչ թե *ի*-ն, որ այդ տառի այժմյան հնչողությունն է:

Հունարեն *ε* և *ο* տառերի առիթով Գ. Այվազյանը փաստում է, որ հայերենում ունենք համապատասխանաբար *է* և *ո*. որն էլ, ըստ հեղինակի, մեր այբուբենի առանձնահատկությունից է բխում, քանի որ եվրոպական լեզուներում (օր.՝ իտալերենում) դրանց համարժեք են *ի*՝-ն *nio*՝ հնչյունախմբերը՝ լատ.՝ *fera* (ֆէ՛ռա) բառի դիմաց ունեն *fiera* (ֆիէ՛ռա), *bonus* (պո՛նուս) բառի դիմաց՝ *buono* (պուո՛նո) և այլն: Հունարեն *ο*-ի դիմաց ունենք մեր *ո* տառը, իսկ *ω*-ի («մեծ *ο*»)՝ փոխարեն ունենք *ով* և երբեմն *աւ* հնչյունախմբերը: Իսկ այն հարցին, թե արդյո՞ք ավելի տրամաբանական չէ վերը նշված դեպքերի համար օրինաչափություն դարձնել ժամանակակից հունարենի հնչողությունը, Գ. Այվազյանն ավելի հակված է նախնիների արած տառադարձությանը, փաստելով, որ հակառակ դեպքում *բառի հնչողությունը ժամանակի հետ պետք է անընդհատ փոփոխվի* (ընդգծ.՝ - Հ. Ի.): Ուստի՝ սովորողների գործը հեշտացնելու նպատակով բերում է հաճախադեպ բառերի մի աղյուսակ՝ մի քանի լեզուների զուգադրություններով, որոնցից մի քանիսը բերում ենք ստորև.

Հունարեն	Լատիներեն	Ֆրանսերեն	Ռուսերեն	Հայերեն
Δαρίος	Darius	Darius	Дарий	Դարեհ
Θουκιδίδης	Thucydides	Thucydide	Θουκιδιδής	Թուկիդիդես
Κικερών	Cicero	Cicéron	Цицеронъ	Կիկերոն
Λεόντιος	Leontius	Léonce	Леонтий	Ղեւոնդ
Λούκας	Lucas	Luc	Лука	Ղուկաս
Πλουτάρχος	Plutarchus	Plutarque	Плутархъ	Պլուտարքոս
Τιριδάτης	Tiridates	Tiridate	Тиридатъ	Տրդատ

Τελέμαχος	Telemachus	Télémaque	Телемак	Տելեմաք
-----------	------------	-----------	---------	---------

5. *Հնչերանգի կանոնարկումը և կետադրական նշանների գործառույթը՝ ըստ Գ. Այվազյանի:* Գ. Այվազյանն առանձին գլուխ է հատկացնում նաև հնչերանգին («*առոգանություն*») առնչվող խնդիրներին՝ ներառելով 4 կետադրական նշան՝ **բուր, շեշտ, երկար և պարոյկ**: Նշելով հնչերանգի ունեցած կարևորագույն դերը բանավոր խոսքում՝ Գ. Այվազյանը փաստում է, որ այն տարբեր ազգերի լեզուներում տարբեր արտահայտչականություն և դրսևորում ունի: Եթե, օրինակ, եվրոպական որոշ լեզուներում մեծ դեր է տրվում շեշտին, այնինչ ֆրանսերենը գրեթե շեշտ չունի, պարսկերենի դեպքում խոսքը երկարում է հնչական տեսանկյունից, իսկ ռուսերենը փակ է և ամփոփ: Քանի որ միևնույն ազգի մեջ միանգամայն տարբեր է խոսքի հնչերանգը՝ կախված տարածքային առանձնահատկություններից, ուստի, ըստ հեղինակի, կանոնավորը պետք է համարել գլխավոր քաղաքների հնչերանգը, **ֆրանսիացիների համար՝ Փարիզինը, անգլիացիների համար՝ Լոնդոնինը, իտալացիների համար՝ Հռոմինը, ռուսների համար՝ Մոսկվայինը** և այլն: Ըստ այդմ՝ որպես հայերենի ընդունելի հնչերանգ՝ Գ. Այվազյանը նախապատվությունը տալիս է **Արարատյան նահանգի բնակիչների հնչերանգին**՝ նշելով, որ «անոնք են մեր ազգին ազնուագույն մասերը հին ատենեն» (Այվազյան Գ., 1869):

Բուն նշանների առիթով, որ դասագիրք-աշխատության մեջ ներկայացված է երկու առանձին բաժիններով՝ «*Առոգանություն*» և «*Տրոհություն*», Գ. Այվազյանը հանգամանալից տալիս է վերջիններիս պատմական զարգացումը և այլ լեզուների հետ հիմնական առնչությունները: Ըստ նրա՝ **բուրի** նշանը (') ձայնի իջնող հնչերանգ է, բայց այժմ չի կիրառվում, քանի որ, հեղինակի կարծիքով, հայերենի գրեթե ամեն բառ ինքնին բուր է (նկատի ունի բառերի՝ առանց շեշտի գրվելը): **Շեշտի** (') առիթով Գ. Այվազյանը գրում է, որ հայերենում, ի տարբերություն այլ լեզուների, շեշտն ընկնում է հիմնականում վերջին վանկի վրա, որը գրավոր խոսքում կետադրական նշանով չի արտահայտվում: Ըստ նրա՝ ոմանք հայերենի բառերի 3 տեսակ են առանձնացնում՝ **շեշտուղոր** (երբ շեշտն ընկնում է բառի վերջին

վանկի վրա. վերջիններս հայերենի բառապաշարի մեծամասնությունն են կազմում), *յարաշէշտ* (երբ շէշտվում է նախավերջին վանկը՝ *ա՛յսպէս, գրե՛թէ*) և *նախայարաշէշտ* (երբ շէշտն ընկնում է վերջից երրորդ վանկի վրա՝ *մա՛նաւանդ, նո՛յնժամայն*): Շէշտի կիրառության՝ Գ. Այվազյանի նախընտրած ձևերը հիմնականում համընկնում են ժամանակակից հայերենում շէշտի կիրառություններին, միայն որոշ դեպքերում, օրինակ՝ կրկնադիր շաղկապների, հեղինակը նախապատվությունը տալիս է շաղկապների՝ առանց շէշտի կիրառություններին: Այսպէս օրինակ՝ «Էւ կենօք Էւ մահու» բառակապակցության մեջ շէշտը, ըստ նրա, ճիշտ կլինի դնել համագոր անդամներից առաջինի վրա միայն՝ «Էւ կենօ՛ք Էւ մահու»: Շէշտի կիրառության մեկ այլ տարբերակ նա նշում է վերջինիս «*կէս հարցական*» իմաստով գործառույթը. այսպէս, օրինակ՝ «Ոչ գիտեմք զի՛ եղել նմա»: *Երկարը* (՛), ըստ նրա, հայերենում կիրառվող կարևոր նշան է, որ երբեմն կարող է փոխարինվել շէշտով՝ *վա՛շ վաշ, երանի՛թէ* և այլն: *Պարոյկը* (՛), որ երբեմն անվանվում է նաև *ուրրակ*, ըստ հեղինակի, ճիշտ կլինի գործածել միայն հարցական բառերի ձայնավորների վրա, իսկ *միթէ* և *արդոք* բառերի վրա երբեք չկիրառել այս նշանը՝ «Միթէ օրէնքն մեր դատի՞ն գմարդ» (Այվազեան Գ., 1869):

Վերջին մասը, որ ունի «*Տրոհութիւն*» վերնագիրը, ներառում է կետադրական նշանների մնացած խումբը՝ «*Ենթամնայ, Ապաթարց, Մակակէտ, Բութ, Ստորակէտ, Միջակէտ, Վերջակէտ, Չակերտ, Փակագիծ, Երկորեակ*», որոնց հիմնական գործառույթը բառերի տարանջատումն է գրավոր խոսքում: Գ. Այվազյանը նշում է, որ տրոհության նշանները, բացի պարսկերենից և արաբերենից, հատուկ են գրեթե բոլոր լեզուներին: Եվրոպական լեզուները և ռուսերենն ունեն գրեթե նույն տրոհության նշանները, և այն հարցին, թե արդո՞ք առավել նպատակահարմար չի լինի մեր լեզվի կետադրությունը ևս հարմարեցնել այդ նշաններին, Գ. Այվազյանը տալիս է բացասական պատասխան, նշելով, որ մեր լեզվի տրոհության նշանները որևէ պակասություն չունեն և շատ ավելի բազմազան են եվրոպական լեզուներում գործածվող նշաններից: Վերը նշված կետադրական նշանների կիրառությունները քննելիս՝ Գ. Այվազյանը նախապատվությունը հիմնականում տալիս է այն տարբերակներին, որոնք այժմ էլ ժամանակակից

հայերենի կանոնավոր տարբերակներ են համարվում: Այսպես՝ նա նշում է, որ ենթամասն (-) գործածվում է տողադարձի դեպքում, զուգահեռ բերում տողադարձի հետ կապված հիմնական կետերը, գաղտնավանկ ը-ի կիրառությունները: Միայն բարդությունների դեպքում, երբ վերջին բաղադրիչը ձայնավորով սկսվող առանձին բառ է և տարածված է վերջիններիս տողադարձի հետևյալ տարբերակները՝ տար-աշխարհ, սուտ-անուն, հեղինակը նախապատվությունը տալիս է ընդհանուր կանոնից չեղվելուն՝ տա-բաշխարհ, սու-տանուն և այլն: Յ կիսաձայնի դեպքում, սակայն, հեղինակը նախապատվությունը տալիս է արքայ-ական, ընծայ-ական ձևերին և ոչ արքա-յական, ընծա-յական՝ այժմ կանոնավոր տարբերակներին: Ապաթարցի (') առիթով Գ. Այվազյանը նշում է, որ այն գործածվում է տաղաչափության մեջ՝ ձայնավորի սղման դեպքում՝ «Ու նդիմանայր բանից նոցին», սահուն արտասանության նպատակով: Աշխարհաբարի ուղղագրության մեջ վերջինիս կիրառվելը հեղինակը համարում է օրինաչափություն՝ բան մ' ալ (բան մի ալ), կ'ուրանայ (կը ուրանայ), որը, սակայն, պետք չէ շատ չարաշահել: Մակակետի (') գործածությունը Գ. Այվազյանը համարում է աստիճանաբար նվազող, նշելով, որ այն հիմնականում դրվել է «ի», «զ», «յ» և «ց» նախդիրների վրա, որպեսզի վերջինս նախորդող կամ հաջորդող բառի մաս չհամարվի՝ «առ 'ի նմանէ», «'ի յայրին»: Բուրբ, որ դրվել է երկու նշանով (՝ կամ '), ըստ հեղինակի, լայն կիրառություն ունի հայերենում, մինչդեռ եվրոպական լեզուներում այդ նշանը չկա. այնտեղ իմաստն արտահայտվում է ստորակետով: Դա է պատճառը, որ ոմանք հայերենում ևս ավելորդ են համարում այդ նշանի գործածությունը: Գ. Այվազյանը, սակայն, նշում է, որ դա մեր լեզվի առավելություններից է, քանի որ այն ամբողջությամբ ստորակետի արժեք չունի, այլ կերպ ասած՝ «կէս ստորակետ» է: Իսկ բուրբ՝ նաև այս նշանով (') գրությունը տպագիր գրականության մեջ Գ. Այվազյանը պայմանավորում է տպատառերի գծագրությանը հարմար լինելու հետ: **Ստորակետը** կամը **ենթակետը** (,) ըստ Գ. Այվազյանի, լայն կիրառություն ունի հայերենում: Հեղինակը նշում է ստորակետի գրեթե բոլոր դրսևորումները, որոնք այժմ էլ կանոնավոր են ժամանակակից հայերենում, միայն որոշ դեպքերում ավելորդ է համարում վերջինիս կիրառությունը՝ «Գիտասցեն թէ ուր է», «Տեսեալ զի

անարատ էր»: **Միջակետի** (.) կիրառության առիթով Գ. Այվազյանը նշում է, որ այն դրվում է ակնկալվող հաջորդ խոսքից առաջ՝ «*Դուք եք աղ երկրի. ապա թե՛ աղն անհամի, ի՞նչ յաղիցի*», նաև ուղղակի խոսքի մեջբերման դեպքում: Հեղինակը շեշտում է, որ երեք միջակետի միասին գործածությունը (...) դրվում է չշարունակվող խոսքի դեպքում: Ինչպես տեսնում ենք, այն իմաստով համընկնում է ժամանակակից հայերենի կախման կետերին՝ «....», իսկ ձևով՝ բազմակետին՝ «...» (Սարգսյան Ա., 2005): Գ. Այվազյանը զուգահեռ նշում է նաև եվրոպական լեզուներում միջակետի համարժեքները՝ (:), (;): **Վերջակետի** (:) առիթով հեղինակը գրում է, որ այն դրվում է մտքի ավարտից հետո, և երկու կետով գրությունը (:) ավելի տրամաբանական է համարում՝ ի տարբերություն եվրոպացիների մեկ կետով վերջակետի (.): **Չակերտի** (“ „) գործածությունը կարևոր համարելով մեկնողական գրականության մեջ՝ Գ. Այվազյանն առաջարկում է այն փոխել այս նշաններով («») և որպես ավելորդ ծանրաբեռնվածություն՝ տողերի սկզբում անընդհատ չկրկնել՝ դնել մեջբերվող հատվածի սկզբում և վերջում միայն (չակերտների՝ այժմյան կիրառության նման): **Փակագիծը** (()) կարևոր համարելով հավելյալ տեղեկություն տալու իմաստով՝ հնարավոր է համարում երբեմն փոխարինել ստորակետներով: **Երկորեակ** (”) նշանի առիթով Գ. Այվազյանը նշում է, որ վերջինս դրվել է կրճատած բառերի դեպքում՝ *Թագ*”, *Հայր մեր*” և այլն: Այն աստիճանաբար դուրս է եկել գործածությունից՝ տեղը զիջելով միջակետին՝ Թագ., Գլ.:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփենք. Գ. Այվազյանի «*Ուղղագրություն լեզուիս հայոց*» դասագիրք-աշխատության մեջ առկա վերլուծություններն ու դատողություններն ի մի բերելով՝ կարող ենք հանգել այն եզրակացության, որ Գ. Այվազյանի քերականագիտական մոտեցումները հիմնված են հայոց լեզվի զարգացման պատմության հարուստ փորձի վրա: Հեղինակը կարողացել է ժամանակի հրամայականով հիմնականում ճիշտ կանխորոշել աշխարհաբարում կիրառվող և վերջինս կանոնարկող ոչ միայն բառապաշարը, այլև ուղղագրական և կետադրական բազում գործառույթներ, որոնց մեծ մասն արդիական է նաև ժամանակակից հայերենում: Հեղինակը մեծ

տեղ և դեր է հատկացնում տառադարձությանն առնչվող խնդիրներին՝ նշելով այն բոլոր սկզբունքները, որոնց պետք է հետևելին թարգմանիչներն իրենց գործերը հնարավորինս միօրինականացնելու նպատակով: Իսկ եվրոպական լեզուների հետ զուգաձևությունները Գ. Այվազյանի դասագիրք-աշխատությունը դարձրել են ավելի համակողմանի և իր ժամանակի համար չափազանց արդյունավետ քերականական գործ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան Ա. (1973)**, Հայոց գիր և գրչություն, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Աղայան Է. (1977)**, Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, Երևան, ԵՊՀ հրատ.:
3. **Աճառյան Հ. (1984)**, Հայոց գրերը, Երևան, ԵՊՀ հրատ.:
4. **Այվազեան Գ. (1869)**, Ուղղագրութիւն լեզուիս հայոց, Թեոդոսիա, տպ. Խալիպեան ուսումնարանի:
5. **Բագրատունի Ա. (1852)**, Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու:
6. **Իրիցյան Հ. (2018)**, Գաբրիել Այվազյանը (Այվազովսկի) Մխիթարյան միաբանության անդամ, «Վենետիկի Մխիթարյան միաբանություն – 300», Միջազգային գիտաժողով, Զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Երևան, էջ 383-409 (նույնի վերատպությունը՝ Իրիցեան Յ. 2017 (տպվել է 2020թ.՝ հետին թվով), Հայր Գաբրիել վրդ. Այվազեանը (Այվազովսկի) միաբան Մխիթարեան միաբանութեան, Բազմավեպ, «Վենետիկ-Ս. Ղազար», ՃՀԵ. տարի, թիվ 3-4, էջ 140-162):
7. **Իրիցյան Հ. (2019)**, Գաբրիել Այվազյանի «Բառագնութիւն աշխարհիկ լեզուի» ձեռագիր երկը՝ որպես աշխարհաբարի տարածմանը նպաստող աշխատություն, Բանբեր Մատենադարանի, հ. 27, Երևան, էջ 371-387:

8. **Իրիցյան Հ. (2020)**, Լեզվի կանոնարկման խնդիրները Գաբրիել Այվազյանի «Խանգարմունք հայկաբանության...» աշխատության մեջ, Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, հ. 1 (31), Երևան, էջ 67-81:
9. **Հակոբյան (Թարումեան) Ռ. (2017)**, Հայոց տառերը: Ձևագոյացման համեմատական քննություն, Երևան, «Անտարես»:
10. **Մուշեղյան Ա. (2006)**, Մեսրոպ Մաշտոցը և նախամաշտոցյան հայ գիրը, «Պատմաբանասիրական հանդես», հ. 2, Երևան, էջ 210-236:
11. **Սարգսյան Ա. (2005)**, Ժամանակակից հայերենի կետադրությունը, Երևան, ԵՊՀ հրատ.:
12. **Սուքիասյան Ա. (2004)**, Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևան, ԵՊՀ հրատ.:

REFERENCES

1. **Abrahamyan A. (1973)**, Hayoc gir & grchowt'yowHayoc gir & grchowt'yown /Armenian Writing and Calligraphy/, Yerevan, Yerevan State University Press.
2. **Aghayan E. (1977)**, Naxamashtocyan hay gri ow grakanowt'yan, mesropyan aybowbeni & harakic harceri masin /About pre-Matsotsian Armenian Script and Literature, the Mesropian Alphabet, and Related Issues/, Yerevan, Yerevan State University Press.
3. **Acharyan H. (1984)**, Hayoc grery' /The Armenian Letters/, Yerevan, Yerevan State University Press.
4. **Ayvazean G. (1869)**, Owghghagrowt'iwn lezowis hayoc /The Orthography of Our Armenian Language/, Feodosia, Khalipyan School Publishing.
5. **Bagratuni A. (1852)**, Hayere'n qerakanowt'iwn i pe'ts zargaceloc /Armenian Grammar for the Educated/, Venice: St Lazar's Press.
6. **Iritsyan H. (2018)**, Gabriel Ayvazyany' (Ayvazovski) Mxit'aryan miabanowt'yan andam /Gabriel Ayvazyan (Ayvazovsky), Member of the Mekhitarist Congregation/, "Mekhitarist Congregation of Venice – 300", International Conference, Collection of

- reports, Yerevan, Publishing House of the Academy of Sciences, pp. 383-409 (reprinting of the same` **Iritsean Y., 2017** (is printed in 2020), Fr. Gabriel Ayvazyan (Ayvazovsky), Member of the Mekhitarist Congregation, Bazmavep, 3-4, Venice: St Lazar's Press, pp. 140-162).
7. **Iritsyan H. (2019)**, Gabriel Ayvazyan «Bar'aznnowt'iwn ashxarhik lezowi» d'er'agir erky'` orpes ashxarhabari tarac'many' npastogh ashxatowt'yown /The Manuscript “Word-Study of the Secular Language” Gabriel Ayvazyan as Work Enhancing the Spread of Modern Armenian (Ashkharhabar)/, Bulletin of Matenadaran, 27, Yerevan, “Nairi” ed, pp. 371-387.
 8. **Iritsyan H. (2020)**, Lezvi kanonarkman xndirneri' Gabriel Ayvazyan «Xangarmownq haykabanowt'ean... » ashxatowt'yan mej /Problems of Language Regulation in the Work “Violations of Armenology” ... by Gabriel Ayvazyan/, Bulletin of Yerevan University: Armenian Studies, 1 (31), Yerevan State University Press, pp. 67-81.
 9. **Hakobyan (Tarumean) R. (2017)**, Hayoc tar'ery': D'agoyacman hamematakan qnnowt'yown /Armenian Letters. A Comparative Study of Formation/, Yerevan, “Antares” ed.
 10. **Musheghyan A. (2006)**, Mesrop Mashtocy' & naxamashtocyan hay giry' /Mesrop Mashtots and the pre-Mashtotsian Armenian Script/, Historical-Philological Journal, 2, Yerevan, Publishing House of the Academy of Sciences. pp. 210-236.
 11. **Sargsyan A. (2005)**, Jhamanakakic hayereni ketadrowt'yowny' /Modern Armenian Punctuation/, Yerevan, Yerevan State University Press.
 12. **Suqiasyan A. (2004)**, Jhamanakakic hayoc lezow (Hnchyownabanowt'yown, bar'agitowt'yown, bar'akazmowt'yown /Modern Armenian Language (Phonology, Lexicology, Morphology)/, Yerevan, Yerevan State University Press.

Асмик Ирицян

Теоретико-грамматические подходы Габриела Айвазяна в контексте
исторического развития армянской орфографии

Заключение

Ключевые слова и выражения: Габриел Айвазян, Габриел Айвазовский, грамматические концепции, армянский алфавит, фонетика, орфография, транслитерация, интонация, знаки препинания.

Учебник-пособие Г. Айвазяна «*Правописание языка нашего, армянского*», помимо собственно педагогической функции, выражает также грамматические представления автора и его подходы к тем или иным языковым вопросам.

В работе рассматриваются важные вопросы, связанные с изобретением письменности, проблемами произношения букв, а также транслитерацией и пунктуацией. Г. Айвазян дает всесторонние сведения о существующих мнениях относительно создания армянской письменности и их соотношении с буквами других языков. В силу требований времени автор большое внимание уделяет вопросам, связанным с транслитерацией, указывая все те принципы, которым должны были следовать переводчики, чтобы максимально унифицировать свои работы.

Теоретико-грамматические подходы Г. Айвазяна основаны на богатом опыте истории развития армянского языка. Автор сумел правильно предвидеть множество орфографических и пунктуационных функций в новоармянского (Ашхарабар), большая часть которых актуальна и в современном армянском языке. Более того, параллели и сопоставления с европейскими языками сделали труд автора более всесторонним и чрезвычайно эффективным грамматическим произведением для своего времени.

Hasmik Iritsyan

Theoretical and grammatical approaches of Gabriel Ayvazyan in the context of the historical development of Armenian orthography

Conclusion

Key words and expressions: *Gabriel Ayvazyan, Gabriel Ayvazovsky, grammatical views, Armenian alphabet, phonetics, orthography, transliteration, intonation, punctuation marks.*

G. Ayvazyan's textbook-manual "*The Orthography of Our Armenian Language*", in addition to its primary pedagogical function, also reflects the author's grammatical understanding and his approaches to various linguistic issues.

The work examines numerous important questions related to the invention of the Armenian alphabet, problems of letter pronunciation, as well as matters of transliteration and punctuation. Ayvazyan provides comprehensive knowledge about the prevailing views on the creation of the alphabet and their relationship to the letters of other languages. In accordance with the demands of the time, the author devotes significant attention to issues concerning transliteration, setting forth all the principles that translators had to follow in order to make their work as uniform as possible.

G. Ayvazyan's grammatical approaches are based on the rich experience of the historical development of the Armenian language. The author was able to accurately foresee numerous orthographic and punctuation functions used in Armenian language (Ashkharhabar), most of which remain relevant in modern Armenian. Moreover, the parallels and comparisons drawn with European languages made the author's work more comprehensive and an exceptionally effective grammatical study for its time.

Հասմիկ Իրիցյան – Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի («Մատենադարան») գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի պատմություն, ձեռագրագիտություն: Հեղինակ է շուրջ 10 հոդվածների: hiritryan@gmail.com

Асмик Ириця́н - Научный сотрудник Института древних рукописей имени Месропа Маштоца («Матенадаран»). Научные интересы: история армянского языка, рукописоведение. Автор около 10 научных статей. hiritsyan@gmail.com

Hasmik Iritsyan – Researcher at the Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts (Matenadaran). Research interests: history of the Armenian language and codicology. Author of about 10 scholarly articles. hiritsyan@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 30.01.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 10.02.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.